

## Ստորագրվեց Փոխըմբռնման Հուշագիր

27.09.2012



Ս.թ. սեպտեմբերի 26-ին, ՀՀ Վայոց ձորի մարզպետի մասնակցությամբ, Վայոց ձորի մարզպետարանում Վայոց ձորի մարզպետարանի, մարզի տասը համայնքների, Օքսֆամ-ի, <Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա> հասարակական կազմակերպության և <Ապավեն համայնքների> բարեգործական հասարակական կազմակերպության միջև՝ ստորագրվեց Փոխըմբռնման Հուշագիր՝ շարունակական կրթության ռեսուրս կենտրոնի բացման վերաբերյալ: Հուշագիրն ստորագրվեց <Նպաստում Հարավային Կովկասում աղետների ռիսկերի նկատմամբ համայնքների դիմակայունությանը> ծրագրի շրջանակներում՝ շարունակական կրթության ռեսուրս կենտրոնի բացման նպատակով համատեղ աշխատանքներ կատարելու վերաբերյալ:

Ըստ հուշագրի՝ Շարունակական կրթության ռեսուրս կենտրոնը համալրված է լինելու ինչպես աղետների ռիսկերի նվազեցման վերաբերյալ համապատասխան տեղեկատվական և ուսումնական նյութերով, այնպես էլ փրկարարական և առաջին օգնության աշխատանքների համար անհրաժեշտ միջոցներով:

Օքսֆամ կազմակերպության առաքելությունն է՝ աղքատության կրճատում և մարդկային տառապանքի վերացում: Նշված առաքելությունն իրականացնելու նպատակով 1994 թվականից կազմակերպությունը Հայաստանում իրականացնում է մարդասիրական և զարգացման տարաբնույթ ծրագրեր շուրջ 165 հեռավոր գյուղական համայնքներում՝ սերտ համագործակցելով կառավարության, տասնյակից ավելի տեղական հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների և մարզային իշխանությունների հետ: